



«ՀԱՅԵԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ  
0002, ք. Երևան, Ամիրյան փ. 23/1,  
հեռ. (+374 10) 510-910 \*9105, (+374 10) 8686  
Էլ. փոստ bank@aeb.am

Հաստատված է «ՀԱՅԵԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ Վարչության  
«29» «12» 2022 թ. թիվ 253/02-29.12.22 որոշումով  
Ուժի մեջ է մտել՝ «10» «01» 2023թ.

### ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՍՓՈՓԱԳԻՐ

Telcell Wallet Էլեկտրոնային վճարային համակարգերի բջջային հավելվածի օգտատիրոջ համար  
հեռավար բանկային հաշիվ բացելու և սպասարկելու ծառայությունների մատուցման

1. Սույն տեղեկատվական ամփոփագրով (այսուհետ՝ Ամփոփագիր) սահմանվում են «ՀԱՅԵԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) կողմից Telcell Wallet Էլեկտրոնային վճարային համակարգերի բջջային հավելվածի (այսուհետ՝ Էլեկտրոնային դրամապանակ) օգտատիրոջ (այսուհետ՝ Հաճախորդ) համար հեռավար բանկային հաշիվ (այսուհետ՝ Հաշիվ) բացելու և սպասարկելու ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն) մատուցելու պայմաններն ու Էական այլ տեղեկությունները:
2. Ծառայության ամբողջական պայմաններին Հաճախորդը կարող է ծանոթանալ Ամփոփագրից, Բանկի ինտերնետային կայքէջից՝ <https://www.aeb.am/> կամ պարզել դրանք կապվելով Ամփոփագրում նշված Բանկի կապի միջոցներով:
3. Ամփոփագրի հրապարակման ամսաթվից հետո Ամփոփագրի պայմանները կարող են փոփոխված լինել, ինչը Հաճախորդը կարող է պարզել կապվելով Ամփոփագրում նշված Բանկի կապի միջոցներով:
4. Ամփոփագիրը Բանկի կողմից կարող է միակողմանի լրացվել և/կամ փոփոխվել, որն ուժի մեջ է մտնում Բանկի ինտերնետային կայքում հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրը լրանալու օրվանից, եթե ուժի մեջ մտնելու ավելի ուշ ժամկետ չի սահմանվում այդ փոփոխություններով:
5. Հաճախորդի նույնականացումը կատարվում է Էլեկտրոնային դրամապանակը սպասարկող Ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից սահմանված կարգով: Բանկն իրավունք ունի իրականացնել Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի և Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:
6. Ընկերության կողմից Հաճախորդի նույնականացվելու և Հաճախորդի կողմից Հաշվի բացման և սպասարկման վերաբերյալ Բանկի օֆերտան ակցեպտավորվելու դեպքում՝ Հաշվի բացման և սպասարկման պայմանագիրը, այսուհետ՝ Պայմանագիր, համարվում է կնքված Հաճախորդի և Բանկի միջև:
7. Բանկն իրավունք ունի չբացել Հաշիվը, չսպասարկել Հաշիվը և/կամ լուծել Պայմանագիրը՝ Հաճախորդի չնույնականացվելու, Ընկերության և/կամ Բանկի կողմից Հաճախորդի պատշաճ ուսումնասիրություն կատարումը Հաճախորդի կողմից չպահովվելու դեպքում:
8. Հաշվին կարող են մուտքագրվել գումարներ Էլեկտրոնային Դրամապանակը համալրվելու նպատակով, իսկ Հաշվից գումարները ելքագրվում են ուղղվելով Էլեկտրոնային Դրամապանակ (բացառությամբ եթե գործում են Էլեկտրոնային Դրամապանակի համալրման սահմանափակումներ), ինչպես նաև Հաշվին կարող են գումարներ մուտքագրվել և օգտագործվել Հավելվածում գործող Օպերատորների օգտին վճարումների կատարման նպատակով, իսկ եթե Հաճախորդը Էլեկտրոնային դրամապանակի միջոցով Բանկին ներկայացնում է բանկային հաշվին մուտքագրվող համապատասխան գումարների կանխիկացման հայտ, այդ դեպքում՝ հայտում նշված չափով գումարները բանկային հաշվին մուտքագրվելու պահից Հաճախորդը անձը հաստատող փաստաթղթով կարող է ներկայանալ և դրանք կանխիկ ստանալ Բանկից:
9. Հաճախորդի կողմից Հաշվի բացման և սպասարկման վերաբերյալ Բանկի օֆերտայի ակցեպտավորումը հաստատում է, որ՝
  - 9.1. Հաճախորդը համաձայն է, որ Հաշվի բացման և/կամ փակման մասին տեղեկությունները տրամադրվեն հարկային մարմիններին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ (այսուհետ՝ Օրենք) սահմանված դեպքերում և կարգով այլ անձանց և պետական մարմիններին:
  - 9.2. Հաճախորդը համաձայն է, որ Հաշվի բացման և/կամ փակման տեղեկությունները տրամադրվեն Ընկերությանը:

- 9.3. Հաճախորդը Պայմանագրին ամբողջությամբ ծանոթացել է, այն պարզ է և հասկանալի է իրեն:
- 9.4. Հաճախորդը ծանուցվել է, որ Բանկը մտադիր է մշակել Հաճախորդի անձնական տվյալները «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքին և Պայմանագրին համապատասխան՝ Բանկի հետ գործարար հարաբերություն հաստատելու և/կամ մեկնագամյա գործարք կատարելու համար հաճախորդի ինքնության ստուգման և նույնականացման գործընթացի ապահովման նպատակով,
- 9.5. Հաճախորդը համաձայն է, որ Բանկի կողմից մշակվեն հաճախորդի հետևյալ անձնական տվյալները՝ անուն, ազգանուն, հայրանուն, սեռ, ծննդյան տվյալներ, անձը հաստատող փաստաթղթի, էլ փոստի տվյալներ, բնակության, հաշվառման հասցեի տվյալներ, ռեզիդենտության կարգավիճակ, փոխկապակցված անձանց մասին տվյալներ:
- 9.6. Հաճախորդը համաձայն է, որ Հաճախորդի ինքնության ստուգման և նույնականացման գործընթացի, Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության ապահովման նպատակով Բանկը կատարի ցանկացած գործողություն կամ գործողությունների խումբ՝ կապված նրա անձնական տվյալները հավաքելու կամ պահպանելու կամ օգտագործելու կամ այլ գործողություններ կատարելու հետ:
- 9.7. Հաճախորդը համաձայն է, որ Բանկի կողմից ծառայությունների մատուցման ապահովման և/կամ Բանկի իրավունքների պաշտպանության անհրաժեշտության դեպքերում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ հաճախորդի անձնական տվյալները տրամադրվեն ՀՀ կենտրոնական բանկին, վարկային բյուրոներին, դատարաններին, իրավապահ մարմիններին, ՀՀ պետական մարմիններին:
- 9.8. Հաճախորդը Բանկին տրամադրում է ամբողջական, ճշգրիտ և արժանահավատ տեղեկատվություն, ցանկացած փոփոխությունների դեպքում էլ՝ պարտավորվում է Բանկին գրավոր տեղեկացնել փոփոխությունների մասին՝ 3 բանկային օրվա ընթացքում, հակառակ դեպքում սխալ տեղեկատվություն տրամադրելու կամ փոփոխությունների մասին չտեղեկացնելու համար ծագած պատասխանատվությունը և/կամ բացասական հետևանքները կրելու է հաճախորդը:
- 9.9. Հաճախորդը համաձայն է, որ Բանկը մշակի իր անձնական տվյալներն առանց ժամկետային սահմանափակման:
- 9.10. Հաճախորդը ծանուցվել է, որ Բանկում պահվող իր անձնական տվյալներում տեղ գտած սխալները կարող են ուղղվել իր գրավոր դիմումի և/կամ համապատասխան հիմքերի ներկայացման/առկայության/ դեպքում:
- 9.11. Հաճախորդը ծանուցվել է, որ պայմանագրով տրվող սույն համաձայնությունը կարող է հետ կանչել՝ եթե չունենա Բանկի նկատմամբ չկատարված պարտավորություններ և գրավոր տեղեկացնի Բանկին նրա ծառայություններից հրաժարվելու մասին:
- 9.12. Հաճախորդը ծանուցվել է Բանկում ներդրված ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:
10. Հաշվին դրամական միջոցների մուտքը և ելքը կատարվում է միայն Պայմանագրով սահմանված նպատակով և պայմաններով:
11. Բանկը կարող է մերժել Հաճախորդի էլեկտրոնային դրամապանակի համալրումները եթե՝ Հաշվին գումարների փոխանցման վավերապայմանները սխալ են, թերի են, և/կամ Հաճախորդը չի նույնականացվում, Պայմանագրով սահմանված այլ դեպքերում, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով:
12. Հաճախորդը տալիս է իր անհետկանչելի համաձայնությունը և հանձնարարականը Բանկին անակցեպտ կարգով հաշվանցել Հաճախորդի նկատմամբ իր դրամական պահանջները Հաշվին մուտքագրվող գումարներից որից հետո 30 օրացույցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել Հաճախորդին՝ տրամադրելով Հաշվի քաղվածք վերջինիս հաղորդակցման եղանակով:
13. Հաշվի դրամական միջոցների նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով կարող են կիրառվել սահմանափակումներ դատական, հարկադիր կատարման և հարկային մարմինների որոշումների հիման վրա: ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով՝ դատական ակտերի, հարկադիր կատարման մարմինների, հարկային մարմինների որոշումների հիման վրա հաշվի դրամական միջոցները կարող են բռնագանձվել, որից հետո 30 օրացույցային օրում Բանկը պարտավոր է դրա մասին տեղեկացնել Հաճախորդին՝ տրամադրելով Հաշվի քաղվածք վերջինիս հաղորդակցման եղանակով:
14. Բանկը պարտավորվում է Հաշիվը սպասարկել Պայմանագրով սահմանված պայմաններով:
15. Հաճախորդը պարտավոր է տրամադրել Բանկին իր գործող էլեկտրոնային փոստի հասցեն և իր բջջային հեռախոսահամարը, ապահովել այդ կապի միջոցների մշտական հասանելիությունը, դրանցով ուղարկված պարտադիր տեղեկատվությունը (ՀՀ օրենսդրությամբ նախատեսված բանկի կողմից հաճախորդին պարտադիր տրամադրման ենթակա տեղեկատվությունը, ներառյալ՝ հաշվի քաղվածքները) ստանալ և ծանոթանալ

ուղարկման օրվանից: Ընդ որում՝ պարտադիր տեղեկատվություն հաճախորդին ուղարկվելու օրվանից 15 օրացույցային օրվա ընթացքում Հաճախորդի կողմից Բանկին գրավոր առարկություններ չներկայացնելը հաստատում է, որ Հաճախորդը համաձայնվել է ուղարկված տեղեկատվությանը:

16. Հաճախորդը պարտավոր է Բանկին ներկայացնել Հաշվի սպասարկման համար Բանկի կողմից պահանջվող տեղեկությունները, փաստաթղթերը և համաձայնությունները:
17. Բանկը երաշխավորում է Հաճախորդի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների պահպանումը համաձայն ՀՀ օրենսդրության:
18. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ ակտերով և/կամ դրանց հիման վրա ընդունված Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված դեպքերում՝ Բանկն իրավասու է կասեցնել, դադարեցնել(ընդհատել), և/կամ մերժել Հաճախորդի և/կամ հօգուտ հաճախորդի գործարքների կատարումը:
19. Բանկը պատասխանատվություն չի կրում Էլեկտրոնային դրամապանակը չգործելու, սահմանափակվելու, ծրագրային կամ տեխնիկական այլ պատճառներով Հաճախորդի Էլեկտրոնային դրամապանակը չհամալրվելու դեպքերում:
20. Պայմանագիրը կարող է լուծվել՝ Էլեկտրոնային Դրամապանակը փակվելու (Էլեկտրոնային Դրամապանակը չի կարող փակվել եթե Հաշվին մնացորդը գրոյական չէ), դեպքում, ինչպես նաև՝ եթե Հաշվի մնացորդը գրոյական է, ապա Պայմանագրից միակողմանի հրաժարվելու մասին մյուս կողմին 3/երեք/ բանկային օր առաջ ծանուցով:
21. Պայմանագրի լուծումը հիմք է Հաշիվը փակվելու համար:
22. Հաճախորդը Պայմանագրից բխող բոլոր-պահանջները կարող է ներկայացնել ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարին՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով, դեպքերում ու պայմաններով: Բանկը հրաժարվել է վիճարկել Ֆինանսական համակարգի հաշտարարի այն որոշումները, որոնցով գույքային պահանջի չափը չի գերազանցում 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամը
23. Հաշվից գործարքների (Էլեկտրոնային դրամապանակի համալրումների) կատարման օրական առավելագույնը չափը կազմում է 400,000 (չորս հարյուր հազար) ՀՀ դրամ և ամսական առավելագույնը չափը կազմում է 2,000,000 (երկու միլիոն) ՀՀ դրամ:
24. Հաշվին մուտքագրվող դրամական միջոցները Բանկի տարածքում Հաճախորդին կանխիկ վճարելու համար Հաճախորդը վճարում է Բանկին կոմիսիոն վճար՝ կանխիկացվող գումարի 1 %-ի չափով: